Հավելված N 434
ՀՀ Էկոնոմիկայի նախարարության
գլխավոր քարտուղարի
2019 թ.հուլիսի 26-ի N 636-Ա հրամանի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ՄԱՍՆԱՎՈՐ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ

1.Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) հանրային ներդրումների վարչության (այսուհետ՝ Վարչություն) պետություն-մասնավոր գործընկերության բաժնի (այսուհետ՝ Բաժին) գլխավոր մասնագետ (ծածկագիրը՝ 23-32.13-Մ2-9)

1.2. Ենթակա և հաշվետու է

Բաժնի գլխավոր մասնագետն անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Բաժնի գլխավոր մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի մյուս գլխավոր մասնագետը կամ Բաժնի պետը:

1.4. Աշխատավայրը

Հայաստան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Միհեր Մկրտչյան 5

2.Պաշտոնի բնութագիր

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները՝

1) իրականացնում է պետություն–մասնավոր գործընկերության քաղաքականության և ընթացակարգի, պետություն-մասնավոր գործընկերության գործընթացներին առնչվող այլ նորմատիվ իրավական ակտերի մշակման աշխատանքները.

2) իրականացնում է պետություն-մասնավոր գործընկերության խթանման, ծրագրերի հրապարակման և մասնավոր գործընկերոջ ներգրավման աշխատանքները.

3) իրականացնում է պետություն-մասնավոր գործընկերության շրջանակներում կարողությունների զարգացմանն ուղղված միջոցառումներ, ուսուցման և վերապատրաստման դասընթացների կազմակերպման հետ կապված աշխատանքները.

4) իրականացնում է պետություն-մասնավոր գործընկերության շրջանակներում փաստաթղթերի օրինակելի ձևերի և խորհրդատվական ուղեցույցների մշակման աշխատանքները.

5) իրականացնում է մշակման փուլում գտնվող պետություն-մասնավոր գործընկերության պայմանագրերի նախագծերի և կնքված պետություն-մասնավոր գործընկերության պայմանագրերի ուսումնասիրման աշխատանքները.

6) իրականացնում է պետություն-մասնավոր գործընկերության ծրագրերի իրականացման ընթացքի և իրականացման արդյունքների պարբերական ուսումնասիրության աշխատանքները.

7) իրականացնում է պետություն-մասնավոր գործընկերության ծրագրերի շտեմարանի վարումը:

Իրավունքները՝

• համապատասխան մարմիններից ստանալ պետություն-մասնավոր գործընկերության ձևաչափով իրականացվող ծրագրերի և նախագծերի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ և հիմնավորումներ.
• համապատասխան մարմիններից ստանալ պետություն-մասնավոր գործընկերության ձևաչափով ծրագրերի իրականացման վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն.
• մասնակցել պետություն-մասնավոր գործընկերության ձևաչափով իրականացվող ծրագրերի քննարկումներին.
• համապատասխան մարմիններից ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն պետություն-մասնավոր գործընկերության շրջանակներում խորհրդատվական ուղեցույցների մշակման ընթացքում.
• մշակման փուլում գտնվող պետություն-մասնավոր գործընկերության պայմանագրերի նախագծերի և կնքված պետություն-մասնավոր գործընկերության պայմանագրերի վերաբերյալ ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն.
• համապատասխան մարմիններին ներկայացնել պետություն-մասնավոր գործընկերության ձևաչափով իրականացվող ծրագրերի և նախագծերի վերաբերյալ դիտարկումներ ու առաջարկություններ.
• մասնակցել համապատասխան միջազգային կառույցների ներկայացուցիչների հետ պետություն-մասնավոր գործընկերությանն առնչվող հարցերի վերաբերյալ հանդիպումներին:

Պարտականությունները՝

• ուսումնասիրել և վերլուծել համապատասխան մարմինների կողմից ներկայացված՝ պետություն-մասնավոր գործընկերության ձևաչափով իրականացվող ծրագրերը և նախագծերը և վերջիններիս վերաբերյալ նախապատրաստել եզրակացություններ.
• ուսումնասիրել, վերլուծել պետություն-մասնավոր գործընկերության խթանման, ծրագրերի հրապարակման և մասնավոր գործընկերոջ ներգրավման աշխատանքները և ներկայացնել կարծիքներ.
• ուսումնասիրել համապատասխան մարմինների կողմից իրականացվող պետություն-մասնավոր գործընկերության ծրագրերի նախագծերի վերաբերյալ նյութերը և կազմել հաշվետվություններ.
• վարել պետություն-մասնավոր գործընկերության ծրագրերի շտեմարանը.
• ուսումնասիրել, վերլուծել և ներկայացնել առաջարկություններ համապատասխան մարմիններին տրամադրվող պետություն-մասնավոր գործընկերությանն առնչվող խորհրդատվական աջակցության վերաբերյալ.
• ուսումնասիրել և վերլուծել մշակման փուլում գտնվող պետություն-մասնավոր գործընկերության պայմանագրերի նախագծերը և արդեն կնքված պետություն-մասնավոր գործընկերության պայմանագրերը,
• մշակել պետություն-մասնավոր գործընկերության համակարգին առնչվող փաստաթղթերի օրինակելի ձևերը և խորհրդատվական ուղեցույցները,
• ուսումնասիրել և նախապատրաստել համապատասխան մարմինների կողմից ներկայացված պետություն-մասնավոր գործընկերության ձևաչափով իրականացվող ծրագրերի և նախագծերի վերաբերյալ նյութերը:

3.Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ տնտեսագիտության բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ:

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Ծրագրերի մշակում
2. Խնդրի լուծում
3. Հաշվետվությունների մշակում
4. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
5. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Փոփոխությունների կառավարում
2. Ժամանակի կառավարում
3. Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
4. Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում
5. Փաստաթղթերի նախապատրաստում

4. Կազմակերպական շրջանակ

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության անմիջական արդյունքի համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ աշխատանքների իրականացման բնույթով պայմանավորված մասնագիտական եզրակացությունների տրամադրման և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում որոշումների կայացման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման արդյունքների ապահովման մասնագիտական գործունեություն որոշակի ոլորտին վերաբերող համապետական ազդեցություն:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասությունների շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի ներսում այլ կառուցվածքային ստորաբաժանումների, այլ մարմինների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս պետական մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ ձևավորված աշխատանքային խմբերում:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրներին տալիս է մասնագիտական լուծումներ և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: